ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

ՀՀ Լոռու մարզի Մեծավանի հուսմայնքապետարանի կարիքների համար Մեծավան համայնքի գրունտային ճանապարհների նորոգման աշխատանքների ձեռքբերման «ՀՀ ԼՄՄՀ-ՀՄԱ-ԱՇՁԲ-18/02» ծածկագրով արտակարգ կամ չնախատեսված այլ իրավիճակի առաջացման հիմքով պայմանավորված մեկ անձից գնման ընթացակարգի հանձնաժողովի հայտերի գնահատման նիստի

գ. Մեծավան	«19» «նոյեմբերի» 2018թ. ժ 11:00
Մասնակցում էին՝	
Հանձնաժողովի նախագահ՝	Ա. Դումիկյան
Հանձնաժողովի անդամներ՝	Տ. Խաչատրյան
	Մ. Խանաղյան
	Ա. Խանաղյան
Հանձնաժողովի քարտուղար՝	Գ. Մարկոսյան

1. **«ՀՀ ԼՄՄՀ-ՀՄԱ-ԱՇՁԲ-18/02» ծածկագրով ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման և ընտրված մասնակցին որոշելու մասին**

/Ա. Դումիկյան/

1.1 «ՀՀ ԼՄՄՀ-ՀՄԱ-ԱՇՁԲ-18/02» ծածկագրով ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման չափանիշներին «ՏՐԱՆՍ ՇԻՆ» ՍՊԸ-ի համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը առկա են և համապատասխանում են «ՀՀ ԼՄՄՀ-ՀՄԱ-ԱՇՁԲ-18/02» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին:

Հիմք ընդունելով «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ Կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված 43-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ հարցման մասին ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ստացված դրական եզրակացությունը.

Հանձնաժողովը որոշեց

1.2 Հիմք ընդունելով գնահատման թերթիկները հաստատել «ՀՀ ԼՄՄՀ-ՀՄԱ-ԱՇՁԲ-18/02» ծածկագրով ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի հայտերի գնահատման արդյունքները և հայտարարել ընտրված /հաղթող/ մասնակցին.

1-ին, 2-րդ չափաբաժինների համար ընտրված մասնակից ճանաչել «ՏՐԱՆՍ ՇԻՆ» ՍՊԸ-ին, որպես բավարար գնահատված և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

1.3 <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն անգործության ժամկետը կիրառելի չէ, քանի որ հայտ է ներկայացրել մեկ մասնակից, և պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել «ՏՐԱՆՍ ՇԻՆ» ՍՊԸ-ին:

1.4 Հաստատել «ՀՀ ԼՄՄՀ-ՀՄԱ-ԱՇՁԲ-18/02» ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ 0:

2. **Ընթացակարգի արդյունքների ամփոփման հանձնաժողովի նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին**

2.1 «ՀՀ ԼՄՄՀ-ՀՄԱ-ԱՇՁԲ-18/02» ընթացակարգի գնահատող հանձնաժողովի աշխատանքների վերաբերյալ հաշվետվության հաստատման, արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագիր կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրը ժամը 11:00-ին գ. Մեծավան, Զորավար Անդրանիկի 2, Մեծավանի համայնքապետարանի վարչական շենք հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ 0:

Հանձնաժողովի		
Նախագահ՝		Ա. Դումիկյան
Անդամներ՝		Տ. Խաչատրյան
		Մ. Խանաղյան
		Ա. Խանաղյան
Քարտուղար		Գ. Մարկոսյան